Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-136-02.11.2012-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.2-րդ և 15.3-րդ կետերով՝

«15.2. ԱՏԳ ԱԱ 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին դասվող սև մետաղի թափոնների և ջարդոնի, սև մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների, բացառությամբ «ժամանակավոր ներմուծում» և «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրված վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների, յուրաքանչյուր տոննայի արտահանման համար՝	բազային տուրքի 80-ապատիկի չափով
15.3. ԱՏԳ ԱԱ 7404 00, 7503 00, 7602 00, 7802 00 000, 7902 00 000, 8002 00 000, 8101 97 000, 8102 97 000, 8103 30 000, 8104 20 000, 8105 30 000, 8106 00 100, 8107 30 000, 8108 30 000, 8109 30 000, 8110 20 000, 8111 00 190, 8112 13 000, 8112 22 000, 8112 52 000, 8112 92 200, 8113 00 400 ծածկագրերին դասվող գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի, բացառությամբ «ժամանակավոր ներմուծում» և «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների, յուրաքանչյուր տոննայի արտահանման համար՝	բազային տուրքի 100-ապատիկի չափով՝

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան	Առաջարկվում է նախագծի 1-ին գոցվածով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում լրացվող նոր՝ 15.2-րդ կետում բացառություն սահմանել Հայաստանի Հանրապետությունում արտադրված և նախագծում նշված ծածկագրերին դասվող ապրանքների համար:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան	Առաջարկվում է նախագծի 1-ին գոցվածով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում լրացվող նոր՝ 15.2-րդ կետում ընդգրկել նաև սև մետաղական կոնստրուկցիաների ծածկագրերին դասվող ապրանքները:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան	Առաջարկվում է նախագծի 1-ին գոցվածով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում լրացվող նոր՝ 15.3-րդ կետում «250-ապատիկի» բառերը փոխարինել «100-ապատիկի» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: